Հովհաննես Հովհաննիսյան

Ամենայն անգամ . . .

Ամենայն անգամ, երբ տեսնում եմ քեզ,
Խելոք աչերիդ նայում զմայլած,
Եվ հանկարծ անփորձ մի մանուկի պես
Ես կարմրում եմ հուզված, շփոթված . . .
Ամենայն անգամ, որքան էլ տրտում
Ինձ տված լինիմ մաշող մտքերի,
Քո ներկայությունն աղբյուր է լինում
Ինձ համար ուրախ, զըվարթ ժամերի:

Այս ի՞նչ է արդյոք, ո՛վ կույս նազելի,
Մի՞թե սեր արդեն, ո՛հ, եթե այդպես,
Թող, ուրեմն, հոգյա՛կ, նվերն երկնքի,
Այս աստվածեղեն կայծն հասնի և քեզ .
Կուզեի և քո արյունը վառված
Սիրո փոթորիկ հաներ քո սրտում,
Կուզեի տեսնել քո հոգին խռոված,
Արցունքի շիթեր և քո աչքերում . . .